

ՅԱՂԹԱՆԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ ՊԱՍԿԱԽՈՐԻՆ ՏԻՐԱՍՕՐ ԿՈՒՍԻ Ի ՅԵՐԿԻՆՍ

- Որովհետ թըռչունն ի սաղարդուց մէջ սիրայնոց  
 ի բունի քաղցրիկ ձագուցըն հանգչելով  
 Գիշերի, յորում ծածկեալ են էք ի մէնջ,  
 4 Առ ի դիտել ըզցանկալի դէմըս նոցուն,  
 Եւ առ ի սնունդ իւրեանց պարէնս հայթհայթելոյ,  
 Խընդամիտ ի վաստակոցըն տաժանմունս,  
 7 Առ բարձրագոյն ոստն անծածկոյթ կանխէ քան զայգն,  
 Եւ կաթոգի սպասեալ մընայ Արեգակն,  
 Կալեալ դէտ ակըն ծագելոյ արշալուսոյն.  
 10 Սոյնօրինակ կայր ուղղաբերձ և ուշակալ  
 Տիրուհին իմ, զերեսսն ի մարզըն դարձուցեալ,  
 'Գ որով Արև արագընթաց չերևի յոյժ,  
 13 Այնպէս զի ես՝ տեսեալ ըզնա զի սըրտագին  
 Կայր ակն ունէր՝ եղէ հանգոյն այնմ որ ըզծիւք  
 Յանկայ իմիք, և յուսով կայ նա հանդարտեալ:  
 16 Սակայն էանց փոքր ինչ ընդ մի պահն և ընդ միւս,  
 Ասել կամիմ՝ ընդ կալ մընալն իմ և հայել  
 Ձի շողային և ես երկինք պայծառափայլ..  
 19 Եւ ասաց Երանուհի՝ « Ահաւասիկ  
 Յաղթանակին Քրիստոսի գունդը, և ժողովեալ  
 Համայն պըտուղն երկնից գընտիցըն բոլորմանց»:  
 22 Հրավառեալ ինձ կերպարանքն ողջոյն թուեցան,  
 Եւ խընդութեամբ աչք իւր էին այնպէս զեղունք՝  
 Ձի ինձ հարկ է յառաջել և չասել ինչ:  
 25 Ըստ Տըրեվեայ նըմանութեան, որ ի յաւերժ  
 Հարսանց միջի, մինչ նըկարէն պըճենն զերկնից  
 Մոցն համայն, ժամտի՝ լըրմունսըն պարզ և ջինջ,  
 28 Տեսի Արեւ մի զբիւրուք բիւր լուսաւորօք,  
 Ձորըս վառեալ նա լուցանէր միահամուռ,  
 Ձորօրինակ մերըն զաստեղըս վերնայինս:

12. Ի մարզն. — Ի կողմն միջօրէական, այսինքն՝ ի մասն երկնից, յորում գտանի Արեգակն ի հասարակ աւուր, և թուի յաչս զի չիցէ յայնժամ յոյժ արագընթաց:

25. Ըստ Տըրեվեայ նըմանութեան. — Հինք զլուսին Տըրեվեայ ևս կոչէին:

31. Ձոր օրինակ մերըն զաստեղըս վերնայինս. — Ըստ աստեղագիտական գիտութեան հնոց է այս բան քերթողոս, որով վարի նա ամենուրեք ի քերթուածին իւրում. քանզի չև էր տալաւին յայնժամ ծանօթ կողմնակեան կողմեցեալ հաւաստի վարկապետութիւնն աստղագիտական:

- 31 Եւ ընդ զուարթ շողսն թափանց փայլատակէր  
ի մէջ աչացքս լուսածին գոյացութիւնն  
Սննդէս փաղփուն՝ զի չէր ինձ այնքմ հանդարտել,  
34 « Երանունի՛ր, ո՛վ առաջնորդ քաղցր և սիրուն » :  
Եւ նա ինձ ետ պատասխանի՝ « Յորմէ ընկճիսդ՝  
ի զօրութիւնն, որում ումեք չիք ժուժկալիւ,  
37 Նա է ինքնին իմաստութիւնն և ուժգնութիւն,  
Որ եբաց յերկրէ՝ յերկինս ըզհանապարհն  
Անձկացեալ յերկարածիգ ժամանակաց » :  
40 Զոր օրինակ ի յոյժ ձրգտիլն յաւկոյց ի դուրս  
Արձակի հուր, ոչ հւրս կալ անդ կարացեալ,  
Եւ հակառակ բնութեանն յերկիր վայրաբերի,  
43 Սոյնօրինակ ի մէջ ուղիսիցն այն փափկութեանց  
Ընդարձակեալ միտք իմ հեղաւ բնաւին արտաքս,  
Եւ որ զի՛նչ իւր լեալ իցէ չգիտէ յիշել :  
46 « Բա՛ց զաչըս քո, և դիտեա՛ քաջ որպիսի եմս :  
Եղեր տեսող դու այնպիսեաց՝ որք ժրպտելոյս  
իմոյ ետուն քեզ զօրութիւն ժուժալ բաւել » :  
49 Որպէս իցէ ոք որ յանձին իւրում զգայցէ  
Ըզտեսիլըն մոռացեալ, և ճրգնիցի  
Վայրապար ի միտոն անդրէն զայն պատկերել՝  
52 Սննդէս էի ես մինչ լըայ զբանսն արժանիս  
Մեծաց յոյժ շնորհակալեաց, ո՛րք ոչ երբէք  
Եղծցին ի զրոյն յորում անցեալքն դրողմին :  
55 Եթէ արդ յերգս ինձ օգնեսցեն լեզուքն համայն,  
Զորս արարին պարարտագոյն Պոլումիս  
Եւ քորք նորին, իւրեանց կաթամբն համեղահամ,  
58 Եւ ոչ ըզմին ի բիւր մասանցըն ճըշմարտից  
Լիցի հնար ասել յերգելն ըզսուրբ ժրպիտն,  
Եւ զդէմսըն սուրբ թէ քանի՞ո՛ն ճառագայթէր :  
61 Ապա ի դէպ է քերթուածոյս սրբբանըւէր  
Վազել զիւրք ի նկարագիրս Արքայութեան,  
Հանգոյն ումեք՝ ում դիպիցի յուղւոյ կըրճիմն :  
64 Այլ որ ըզգործս ոք ծանրաբեռն ածցէ զմուսու,  
Եւ զի ուս մահկանացու է որ կրէ վայդ :  
Ոչ դիցէ մեզ ում ընդ նովաւ սարսոհալ դողայն :  
67 Ոչ է փոքու կարկուրէի ծովս այս ի դէպ,  
Զոր հատանէ նա ժըմբտեալ ցըռկաւ իւրով,  
Եւ ոչ որ յանձն իւր զընդայցէ նաւապետի :  
70 « Ընդէ՛ր ի սէր գեղոյ իմոյ այսչափ իցէ  
Քեզ հարկանիլ՝ մինչև չհայել ի բուրաստանն  
Ընդ նըշուլիւքըն Քրիստոսի շըքեղ ծաղկեալ :

32. Լուսածին գոյացութիւնն. — փառաւորեալ մարդկութիւնն Քրիստոսի :

53-54. Ուր ոչ երբեք եղծցին ի գրոյն. — Ի իշատակէ մոռացս :

55. Պոլումիս. — Մին յինն Մուսայից :

- 73 Անդ է վարդն, յորում եղև աստուածային  
 Բանըն մարմին, և անդ շուշանքն՝ որոց բուրմունք  
 Ծանուցին ըզճանապարհըն բարութեան ։
- 76 Այսպէս զայս Երանուհի։ Եւ ես պատրաստս  
 Եւ կազմ առ կամրս խորհրդոցն՝ ընդ ապիկար  
 Արտեանունս իմ մաքառեւ անդ ըսկոսայ։
- 79 Որպէս յամրիծ շողն Արեու, որ ի ծերպից  
 Յայտէր ամպոյ, աչք իմ՝ գրտեալք ընդ հովանեաւ՝  
 Տեսին երբեմն ըզդարաստան ինչ ծաղկազարդ,
- 82 Սոյնպէս տեսի ժողովս յորունց լուսերամից  
 Ի հրավառ շողից վերնոց կայծակնացեալս,  
 Առանց զըսկիզբն կայծականց տեսանելոյ։
- 85 Այսպէս դրոշմեալդ ի սոսին դու, ո՛վ բազմագութ  
 Զօրութիւն, ելեր ի վեր, առ ի տեղի  
 Տալ աչացս, որք անկարողքն էին այդրէն։
- 88 Ամենագեղ ծաղկին անուն՝ առ որ կարդամ  
 Միշտ ընդ այգն և յերեկոյս՝ յինքն ըզհամայն  
 Միտս իմ ձրգեաց զ'ի մեծագոյն լոյնս հայեցայց։
- 91 Եւ այն ինչ յիս ներկարեցին աչքս երկորին  
 Զորպիսութիւն զրւարթ աստեղն և զմեծութիւն,  
 Որ է 'ստ յաղթող գլոյն յերկրի՝ յաղթող յերկինո,
- 94 Բոցանշոյլ ինչ ի ներքուստ երկնից իջեալ,  
 Իբր ըզպըսակ, բոլորաձև տեսանելով,  
 Պատեաց ըզնա, և շրջեցաւ շուրջ ըզնովաւ։
- 97 Քաղցրագոյն ձայնից հընչմունք, որք կերպակերպք  
 Լըսին յերկրի աստ և դիւթեն յոյժ ըզհոգիս,  
 Իբր ամպոց որոտընդոստ ճայթմունք թուիցին
- 100 Համեմատեալս ընդ գեղգեղանս այնրը քնարի,  
 Որ պըսակէր ըզգոհար ակնըն շափիղայ,  
 Որով պըննին երկինք և ևս ականակապ։
- 103 « Ես եմ սէրն հրեշտակային և շրջըրջիմ  
 Ըզընծութեամբըն գերափառ, որ ի ծոցոյ  
 . Նորուն բըղխէ, ուր ցանկացեալն ի մէնջ ագաւ։

103. Ես եմ սէրն հրեշտակային. — Է Հրեշտակապետն Գարբիէլ, որ երգէ զայս երգ սիրոյ, և զգովութիւնս Տիրամօրն ի կողմանէ ամենայն դասուց Հրեշտակաց։

104. Ըզընծութեամբըն. — Յնծութիւն (Letizia) կոչէ քերթոս զլոյսն, որ շուրջ պատէ յերկինս զերանեալ հոգիս, և զՍ. Կոյսն Աստուածածին։ Այսպէս յերգն Ը, 52 - 55 կարողոս Ուռն (Carlo Martello) ասէ ինքնին առ քերթողն՝

Յընծութիւն իմ շուրջ գինև փայլատակեալ  
 Թաքուցանէ զիս առ ի քէն, և՛ իբրև զորդն  
 Ի մետաքսին իւրում ծրարեալ՝ զիս ըսքողէ։

Ըստ այսմ իցէ թերեւ և Ս. Գր. Նիսաացւոյ ասելն ի ներբողան ճառին իւրում զՍ. Եփրեմայ. «Առդ յերկնային բազմի խորանս հոգի նորա (Ս. Կիրիլի), ուր Հրեշտակացն են դասակարգութիւնք, ուր Մարտիրոսացն ինկորիւնք, ուր Արդարոցն ցնծութիւնք, ուր Վարդապետացն պայծառութիւնք։ (Հմտ. Լիսակատար Վարք Սրբոց ի Հ. Մկրտիչ Վ.է Ագեբեան. Հատոր Ժ, էջ 418)։

- 106 Եւ շրջեցայց շուրջ մինչ, Դըշխոյդ երկնից, գնայցես  
Ձեռ Որդւոյդ, և զգերակայ գունտն առնիցես՝  
109 Այդրը մտեալ՝ չըքնաղագեղ յոյժ աւաւել » :  
Սոյնօրինակ առնոյր վախճան շրջանակեալ  
Քաղցրերգութիւնն, և կըրկնէին առ հասարակ  
Երգեալ գանուներն Մարեմայ միւս լուսակերպը :  
112 Համապարփակ տիեզերաց արքայական  
Կըրկնոցին, որ առառել յոյժ բորբոքեալ  
Արծարծանի յաստուածային շունչն և յօրէնս,  
115 Այնչափ հեռի էր առ ի մէնջ խորշն ներքին  
Ի վերոյ՝ զի տակաւին ի տեղւոջէս  
Յորում կայիս՝ ինձ չըլինէր տեսանելի.  
118 Որոյ վասն ոչ կարացին աչք իմ լինել  
Ըզհետ բոցոյն պըսակելոյ, որ ըզկընի  
Որդւոյն իւրոյ ել համբարձաւ ի վեր ի վեր,  
121 Եւ զօրէն մանկան տղայոյ, որ կարկառէ  
Ձրագուկսն առ մայրն, յետ զիելոյն իւրոյ ըզկաթն,  
Անձկով հոգւոյն՝ որ յըզգայունսն իսկ ցոլանայ,  
124 Լուսատարմիկքն ողջոյն ի վեր ձըգտեցոցին  
Ձիւրեանց բոցսն. այսպէս յայտնեալ ինձ ըզմեծ սէրն  
Որով էինքն կաթոգինք ի Մարիամ :  
127 Ապա կացին ինձ յանդիման անդ ի տեղւոջն  
Ըզթագունի երկնիցն երգեալ այնպէս քաղցրիկ՝  
Ձի քաղցրութիւնն այն հանապաղ յիս կայ մընայ :  
130 Ո՛վ ո՛րչափ լիութիւն է համբարեալ  
Ի տապանակսդ այդ մեծաճոխս, որք յաշխարհիս  
Յայսմիկ եղեն մըշակք ընտիրք ի սերմանել :  
133 Ձուարհացեալք այդքն բերկրին, և կեան գանձու՝  
Ձոր ըստացան արտասուագին յաքսորսն իւրեանց  
Ի Բաբելոն, առ ոտն ի նմին հարեալք զոսկի :  
136 Անդ կատարէ ընդ հովանեաւ վեհ Միածնին  
Աստուծոյ և Մարեմայ, ընդ հին և նոր  
Ժողովելոց, ըզյաղթանակ իւրն յաղթութեանց  
139 Նա՛ որ յաշուսն ունի զփականս այդչափ փառաց :

ՏԱՆԴԷ ԱՐՔ. ԵՐԳ. ԻԳ.

Թարգմ. Հ. Դ. Վ. Նազարեթեան